352
Ա-21



# ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍ-ՄՐՑՈՒԹՅԱՆ

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

14 FEB 2013
39.656

Թարգմ. Ա. ԴԱՆԻԼՅԱՆ
Տեխ. խմբ. Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 5289. Ст. 364. Б.-6. Заказ № 2743. Тир. 1500.
Тип. „III Интернационал", Баку,, ул. Саратовца Ефимова, 29.

352
Ա-21
1 MAR 2010
37647

# ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ, ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍ – ՄՐՑՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ:

## I. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՐ

1. Պետք է բնակչության միջոցներն ըստ յուրաքանչյուր աղբյուրի և օրենքով սահմանված ժամկետներում մոբիլիզացիայի յենթարկելու պլանը, այդ թվում և գյուղատնտեսական հարկի, կոպարային ապահովագրման, ինքնատուրքավորման պլանը լրիվ կատարել, «յերկրորդ հնգամյակի» փոխառության (յերկրորդ տարվա թողարկման) բաժանեգրման փողերը լրիվ ու ժամանակին գանձելու և խնայողական դրամարկղները ներդրումներ քաշելու պլանը կատարել:

2. Կուլտուրքը, գյուղատնտեսական հարկը, ինքնատուրքավորման և կոպարային (օկլադնոյա) ապահովագրման ապառիկները լրիվին լիկվիդացիայի յենթարկել, ապառաքավորների ցուցակը կազմել՝ վճարման յուրաքանչյուր ժամկետից հետո յերկու օրվա ընթ[illegible]ույժր (պենյա) կանոնավոր հաշվել և [illegible]

3. [illegible] յուղէն ուղիղ կազմել ու իրագործել [illegible]ային խիստ կարգապահություն արմա-

տացնել: Յեռամսյակային դրամարկղային պլանները ժամանակին և ուղիղ կազմել, գյուղական բյուջեյի յեկամտային մասը կատարել, ծախսերը բյուջեյով տրված հատկացումների համապատասխան կերպով անել, ժամանակին աշխատավարձ, մանավորապես ուսուցիչներին ու բժշկական աշխատողների աշխատավարձը վճարել ու նոր ուսումնական տարվա նախապատրաստության գործը ժամանակին և լրիվին դրամավորել, գյուղական բյուջեների փողերը պետական բանկի դրամարկղներում կամ խնայողական դրամարկղներում պահել, բյուջեն կատարելու հաշվառման ու հաշվետվության գործը կանոնավոր դնել:

Խիստ հսկողություն, վոր գյուղական բյուջեյում գտնվող փողերը հիմնարկությունները կանոնավոր ծախսեն: Ավանս ստացող անձնավորություններից ու հիմնարկություններից ժամանակին հաշիվ ստանալ, այդ հաշիվներն ստուգել և թույլ չտալ, վոր ավանսային պարտքեր կուտակվեն:

Գյուղական բյուջեն կատարելու մասին՝ գյուղխորհրդի նախագահության ընդլայնած նիստում յեռամսյակային հաշվետվություն ունենալ՝ վերստուգիչ հանձնաժողովի կից զեկուցումով, և բյուջեն կատարելու մասին զեկուցումներ տալ կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների ժողովներում:

1935 թվի համար գյուղական բյուջեն ժամանակին կազմել, լրիվին հաշվառելով ու հայտնաբերելով բոլոր յեկամտային աղբյուրները:

4. Տուրքավորման ոբյեկտները ժամանակին ու լրիվ հաշվառել, և գյուղատնտեսական հարկը, կոպարային ապահովագրությունն ու ինքնատուրքավորումը ճիշտ հաշվել, կոլտնտեսություններում կոլտնտեսականների ու մենատնտեսների ամեն տեսակի ու տարիքի անասունները ճշտիվ ու լրիվ հաշվառել, անկախ այն բանից, թե յենթակա՞ յե հարկային տուրքավորման, կամ ապահովագրման, թե՞ վոչ, բոլոր կոլտնտեսությունների, այդ թվում և տուրքավորման ոբյեկտ չունեցող և հաշվառման ռոպեյին չարքից դուրս յեկած բոլոր տնտեսությունները ճշտիվ և լրիվին հաշվառելը, ուղիղ հաշվառել բոլոր քանային տարածությունները՝ սահմանված պլանների համաձայն, լրիվին հաշվառել խոտհարքերը, այգիները, խաղողի այգիները, վորոնք վոչ հողագործական մասնակ և չուկայում գնահատվող գներով՝ իրենց մրգթերքները ծախելուց ստացած յեկամուտ ունեն, ու ճշտիվ վորոշել այդ յեկամուտները:

Ժամանակին ու ճշտիվ հաշվել յուրաքանչյուր առանձին վճարատուի գյուղատնտեսական հարկը, կոպարային ապահովագրումն ու ինքնատուրքավորումը, ժամանակին ու ճշտիվ տալ օրենքով սահմանված բոլոր արտոնություններն ու զեղչերը, ժամանակին հանձնել ծանուցումները վճարատուներին և լրացնել անձնական հաշիվները:

Լրիվին յերևան հանել ու անհատական կարգով տուրքավորել կուլակային տնտեսություններին ու թույլ չտալ, վոր աշխատավորների տնտեսությունները տուրքավորվեն կուլակային տնտեսությունների համար նախատեսնված կարգով ու չափերով:

Գյուղական հարկային ու ապահովագրական հանձնաժողովները պետք է ակտիվ աշխատանք տանեն ոբյեկտները հաշվառելու և վճարելիքները հաշվելու վերաբերմամբ, գյուղական ակտիվը և ամենից առաջ՝ գյուղխորհրդի ֆինանսական ու գյուղատնտեսական սեկցիաների անդամներն ու ֆինակտիվիստները քա-

չել օբյեկտները հաշվառելու, վճարումների հաշիվն ու արտոնություններ տալու ճշտությունն ստուգելու գործին:

Գյուղատնտեսական հարկի, ինքնատուրքավորման և կոպարային ապահովագրման օրենքները մշակել գյուղխորհուրդների ընդլայնված նիստերում՝ այդ նիստերին քաշելով ակտիվը, — և կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների ժողովներում:

Ժամանակին ու կանոնավոր քննել գանգատները:

5. Ուղիղ կազմակերպել կոպարային ապահովագրության աշխատանքը, յուրաքանչյուր գյուղխորհրդի կից կազմակերպել աշխատունակ գյուղական ապահովագրական հանձնաժողով, աշխատունակ հասարակական ապահովագրական տեսուչներ ջոկել և կոլտնտեսություններում ապահովագրական ազդանշանային պոստեր դնել:

Պետք է ժամանակին և ուղիղ կազմել ապահովագրական արձանագրությունները, յերևան հանել վնասների իսկական պատճառները, վճռականորեն մերկացնել ապահովագրական վարձատրման ժամանակ դասակարգային թշնամի տարրերի կողմից պետությանը խաբելու փաստերը, միևնույն ժամանակ ապահովելով տարերային աղետներից տուժած իսկական վնասների ժամանակին վճարումը. սիստեմատիկաբար ստուգել կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ապահովագրած գույքը և անհապաղ շրջգործկոմին հայտնել գույքին անտնտեսավար վերաբերմունք ցույց տալու բոլոր դեպքերի մասին:

Ամենամեծ չափերով ընդգրկել կոլտնտեսականներին ու աշխատավոր մենատնտեսներին կյանքի կոլեկտիվ ապահովագրությամբ ու անասունների կամավոր ապահովագրությամբ:



Հսկողություն՝ վարձատրությունը ժամանակին վճարելու համար:

Կանոնավոր ծախսել ապահովագրական վճարումների արված հատկացումները նախազգուշական միջոցառումների համար (հակահրդեհային, պահպանության, պայքար անասունների համաճարակի դեմ) և թույլ չտալ այդ միջոցներն ուրիշ պետքերի համար ծախսելու:

Ժամանակին և ճշտիվ տալ ապահովագրման վերաբերող արտոնություններն ու ժամանակին նայել գանգատներն ու դիմումները:

6. Անասունը սատկելու մասին արձանագրություններ կազմել ոչ ուշ, քան սատկելու հետևյալ օրը, և գյուղական ապահովագրական հանձնաժողովներն այդ արձանագրությունները պետք է քննեն յերեք օրում:

Անասունը սատկելու մասին գյուղական ապահովագրական հանձնաժողովների հաստատած արձանագրություններն ուղարկել ոչ ուշ քան յերկու օրում, այդ արձանագրությունները քննելուց հետո:

7. Օրինակելի, կուլտուրական խնայողական դրամարկղ կազմակերպել, խնայողական դրամարկղներն ապահովել լավ շինությունով և աշխատավորների լավ կադրով, մաքուր պահել շինությունը, օրինակելի կերպով սպասարկել փոխառության օբլիգացիա ունեցողներին և ավանդատուներին, ժամանակին բաժանել փոխառությունների վճարած օբլիգացիաները. սիստեմատիկաբար ստուգել ու յերևան հանել շահումները՝ լավագույն հարվածային կոլտնտեսականներից, կոլտնտեսուհիներից ու առաջավոր աշխատավոր մենատնտեսներից խնայողական դրամարկղի լիազորներ ջոկել՝ ներդրումներ ներգրավելու, լիազորներին դեկա

վարել և սիստեմատիկաբար ստուգել նրանց աշխատանքը:

Լրիվ կատարել խնայողական դրամարկղները ներդրումներ քաշելու պլանը և լիովին գանձել յերրորդ հնգամյակի փոխառության (յերկրորդ տարվա թողարկում) բաժնեգրման վճարները՝ ամենօրյա մասսայական աշխատանքի և խնայդրամարկղի կողմից աշխատավորներին օրինակելի սպասարկման հիմունքով:

Կանոնավոր հաշվառել փոխառություններից ստացվող գումարները և հավաքած փողերը ժամանակին հանձնել խնայողական դրամարկղներին:

Ամրապնդել գյուղխորհրդներին և կոլտնտեսություններին կից աջակցության հանձնաժողովների կազմն ու սիստեմատիկաբար ղեկավարել նրանց աշխատանքը:

8. Օրինակելի կերպով դնել ֆինանսական հաշվառումն ու հաշվետվությունը: Ուղիղ տանել ֆինանսական հաշվեառման գրքերն ու փաստաթղթերը, կատարել գյուղական բյուջեն, ձևակերպել դրամական գումարներ և գույք ընդունելն ու ծախսելը, կանոնավոր դնել վճարատուների անձնական հաշիվները, գյուղատնտեսական հարկի, կոպարային ապահովագրման, ինքնատուրքավորման, փոխառության հաշվետեսային վճարացուցակները և այլն. Շրջանային կազմակերպությունները պետք է կանոնավոր և ժամանակին կազմակերպեն գյուղխորհրդի համար նախատեսված բոլոր հաշվետվությունները:

9. Պետք է կանոնավոր կազմակերպել պետական և տեղական բյուջեների դրամական գումարներն ընդունելը, պահելը և պետական բանկին կամ խնայողական դրամարկղին հանձնելը: Յուրաքանչյուր վճարատուի անպայման տալ սահմանված ձևի անդորրագիր և կանոնավոր գրել—լրացնել այն, անդորրագրերի տեսա



րակներն ուղիղ հաշվառել, պահել ու բանեցնել, ուշադրությամբ ընտրել և խստիվ հաշվառել գյուղխորհուրդների՝ փող գանձող բոլոր լիազորներին, հրահանգել նրանց և ստուգել նրանց կատարած աշխատանքն ու նրանցից ստանալ հավաքած փողերը վոչ պակաս, քան յերկու որը մեկ անգամ:

Գյուղխորհուրդների հավաքած դրամական գումարները լիովին պետական բանկին կամ խնայողական դրամարկղին հանձնել ճիշտ սահմանված ժամկետներում:

Չպետք է լինեն գյուղխորհուրդների դրամական գումարները վատնելու, գողանալու և անկանոն ծախսելու փաստեր:

10. Պետք է ֆինանս — հարկային և ապահովագրական աշխատանքում հեղափոխական օրինականություն պահպանել: Ճշտությամբ պահպանել օրենքները՝ կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին ու աշխատավոր մենատնտեսներին հարկով տուրքավորելիս, և ուղիղ հաշվել կոպարային ապահովագրությունն ու ինքնատուրքավորումը, ժամանակին տալ բոլոր արտոնություններն ու զեղջերը:

Թույլ չտալ, վոր կոլտնտեսականների տեղ՝ կոլտնտեսություններից տուրքեր, ապահովագրական վճարներ, փոխառության վճարներ գանձեն. Թույլ չտալ, վոր կոլտնտեսությունների ընթացիկ հաշիվներից՝ ապորինի կերպով դրամական գումարներ դուրս գրվեն:

Թույլ չտալ վորևէ տեղական ապորինի հարկը դնել ու գանձումներ անել (հարկերի ստեղծելաբանություն):

Անպայման կամավորության սկզբունք պահպանել դրամական գումարները խնայողական դրամարկղները

քաշելու գործում և անարգել կերպով տալ ներդրումները։

Ժամանակին, ուշադրությամբ և կանոնավոր քննել հարկերի ու ապահովագրական վճարների վերաբերմամբ կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների բոլոր գանգատներն ու դիմումները։

11. Որինակելի կերպով կազմակերպել ֆինանսական սեկցիայի ու ֆինանսական ակտիվի աշխատանքը։ Ֆինանսական սեկցիայի աշխատունակ կազմի ընտրություն, նրա գործունեության ղեկավարություն յեվ ստուգում։ Ֆինանսական սեկցիա քաշել ակտիվիստ կանանց, բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին։

Ֆինանսական սեկցիան ակտիվ մասնակցության քաշել գյուղական բյուջեն կազմելու և կատարելու գործին, ֆինսեկցիային կոնկրետ հանձնարարություններ տալ, հետազոտելու ու ստուգելու, թե միջոցներն ինչպես են ծախսում գյուղական բյուջեյի հաշվին գործող հիմնարկությունները, ֆինանսական սեկցիայի հաշվետվությունները լսել գյուղական խորհրդի ընդլայնած նիստերում, վոչ պակաս քան ամիսը մի անգամ։

Ֆինանսական սեկցիան դարձնել բնակչության միջոցների մոբիլիզացիայի պլանի իրականացման համար ամբողջ ֆինանսական ակտիվը միացնող և կազմակերպող կենտրոն։

Ամենօրյա աշխատանք ֆինանսական սեկցիայի անդամների ու ֆինանսական ակտիվիստների համար․ բարձրացնել նրանց վորակը՝ նրանց հետ միասին մշակելով միջոցների մոբիլիզացիայի պլանները, գյուղական բյուջեն, գյուղատնտեսական հարկի, ինքնատուրքավորման և կոպարային ապահովագրման որենքները։



12. Մասսայական - քաղաքական աշխատանք տանել գյուղական բյուջեյի վերաբերմամբ բնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու գործում։ Գյուղխորհուրդների միջև սոցմրցություն, թե ով ավելի լավ կկատարի ֆինպլանը, և սոցմրցություն կազմակերպել կոլտնտեսականների և կոլտնտեսական բրիգադների, գյուղերի ու առանձին ֆինանսական հարվածայինների միջև։

Լուսաբանել տեղական բյուջեյի, գյուղատնտեսական հարկի, կոպարային ապահովագրության, ինքնատուրքավորման, փոխառության միջոցների գանձման և խնայողական դրամարկղները ներդրումներ քաշելու հարցերը՝ պատի մամուլում, քաղբաժնային ու շրջանային թերթերում։

Կոնկուրս - մրցության վերաբերյալ ցուցանիշների մշակում կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների լայն ժողովներում, և գյուղի աշխատավոր մասսաները մոբիլիզացիայի յենթարկել՝ այդ կոնկուրսին վերաբերվող ցուցանիշների հաջող կատարման համար։

## II. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Պետք է ուղիղ կազմակերպել ֆինանսական սեկցիայի աշխատանքը. — կազմել աշխատանքի յեռամսյակային ու ամսական պլանները, և այդ պլանները կատարել նշված ժամկետներում, հաշվեառել ֆինակտիվը, հաշվեառել և ստուգել սեկցիայի յուրաքանչյուր անդամին ու ֆինանսական ակտիվիստներին։

2. Ամեն որ գործնականորեն մասնակցել բնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու պլանը կատարելու համար մղվող պայքարին. մասսայական-բացատրական լայն աշխատանք տանել կոլտնտեսական

ների ու աշխատավոր մենատնտեսների շարքերում՝ նրանց ֆինանսական պարտավորությունները կատարելու վերաբերմամբ. սոցմրցություն կազմակերպել կոլտնտեսությունների, կոլտնտեսային բրիգադների, գյուղերի և առանձին ֆինանսական ակտիվիստների միջև, թե ով ավելի լավ կկատարի ֆինանսական պլանը. սոցմրցության գործում մասնակցել հարևան գյուղխորհուրդների ֆինսեկցիաների հետ. առաջավոր կոլտնտեսությունների բուքսիրային բրիգադներ կազմակերպել հետ մնացող կոլտնտեսություններում, ուղիղ դասավորել ֆինանսական ակտիվը՝ առանձին աշխատանքներ կատարելու համար (գյուղատնտեսական հարկի վերաբերմամբ՝ առանձին, փոխառության վերաբերմամբ՝ առանձին և այլն):

3. Ֆինանսական սեկցիան ակտիվ կերպով պետք է մասնակցի գյուղական բյուջեն կատարելու գործին. պետք է հսկի, վոր բոլոր յեկամուտները ժամանակին ու լրիվ գյուղական բյուջեյի մեջ մտնեն. գյուղական բյուջեյի հաշվին գտնվող դպրոցների, հիվանդանոցների և մյուս հիմնարկությունների կողմից միջոցները ծախսելու ճշտության հսկողական ստուգում պետք է լինի:

4. Ֆինանսական սեկցիայի ակտիվ մասնակցությունը տուրքավորման օբյեկտները հաշվեառելու, վճարումները հաշվեառելու, ապահովագրական վնասները վորոշելու և այդ վնասների իսկական պատճառները հայտնաբերելու, վճարատուների գանգատները քննելու, ինչպես և փոխառության շահումներն ստուգելու գործին:

5. Ֆինանսական սեկցիաների կազմն ամրապնդել լավագույն հարվածային կոլտնտեսականներով ու առաջավոր աշխատավոր մենատնտեսներով և հեռացնել անաշխատունակ և մանավանդ՝ մեզ համար խորթ



մարդկանց. կանոնավոր ոգտագործել սեկցիաներին և ֆինակտիվիստներին, նրանց համար կոնկրետ առաջադրություններ սահմանել և ստուգել, թե նրանք ինչպես են կատարել այդ առաջադրությունները. հանձնել լավագույն ֆինակտիվիստների փորձը:

Ֆինսեկցիայի և ֆինակտիվի անդամների կազմի հոսունություն չպետք է լինի. խրախուսել լավագույն ֆինակտիվիստներին մամուլի միջոցով, պատվո տախտակին գրելով և այլն:

6. Յուրաքանչյուր կոլտնտեսությունում պատգամավորական խմբակներին կից, ջոկել ֆինխմբակ կամ ֆինկազմակերպիչ՝ կոլտնտեսություններում միջոցների մոբիլիզացիայի յենթարկելու պլանի իրականացմանն աջակցելու: Ամենորյա հսկողություն ֆինկազմակերպիչների աշխատանքին, նրանց զեկուցումները լսել ֆինսեկցիայում:

7. Ֆինսեկցիայի աշխատանքներին քաշել գյուղի պրոֆմիութենական, կոմյերիտական ու մյուս հասարակական կազմակերպությունները:

8. Ֆինսեկցիաների հաշվետվությունն իրենց աշխատանքների մասին՝ կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների ժողովներում, վոչ պակաս քան յերեք ամիսը մի անգամ:

## III. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

1. Գյուղխորհրդի ֆինանսական աշխատանքի համատարած վերստուգում՝ մի անգամից վոչ պակաս յուրաքանչյուր յեռամսյակում: Ուշադրությամբ ստուգել, թե վորքան ուղիղ է գրված դրամական միջոցների մուտքն ու ծախսը, վորքան ուղիղ է արժեքավոր թղթերը, բլանկները և անդորրագրերը հաշվեառե

յու և պահելու գործը․ որքան կանոնավոր է բյուջեի, գյուղատնտեսական հարկի, ինքնատուրքավորման ու կոպերատիվ ապահովագրման վերաբերյալ հաշվետվությունը, ստացումների ցանկը, փոխատուության հաշվետեսային հաշվեցուցակը․ որքան կանոնավոր կերպով է անդորրագրերը տրված վճարատուներին, բաժանորդներին ժամանակին բաժանվել վճարված օբլիգացիաները․ ստուգել փողը գանձողներին, ստուգել հավաքած փողերը պետական բանկի դրամարկղներին կամ խնայողական դրամարկղներին ժամանակին յեվ ճշտիվ հանձնելը, ստուգել գրված գույքի հաշվառումը, պահելը և իրացումը։

2․ Պետք է ամեն ամիս վերստուգում կատարել գյուղխորհրդի ֆինանսական աշխատանքի առանձին ճյուղերում․ ստուգել դրամարկղում յեղած գումարը, փողն ընդունելու ճշտությունը, հավաքած գումարները, մանավանդ պետական ու տեղական բյուջեների միջոցները պետական բանկի կամ խնայողական դրամարկղին ժամանակին և լրիվ հանձնելը․ ստուգել հաշվառման և անդորրագրերի պահպանման ճշտությունը․ ստուգել փողը գանձողներին, անմիջականորեն վճարատուների մոտ (տնե տուն) ստուգել նրանց տրված անդորրագրերի ճշտությունը։

3․ Վերստուգիչ հանձնաժողովի կազմի աշխատունակություն վերստուգիչ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի ակտիվ աշխատանք․ վերստուգիչ հանձնաժողովի անաշխատունակ անդամներին սահմանված կարգով փոխարինել լավագույն հարվածային կոլտնտեսականներով ու կոլտնտեսուհիներով։

4․ Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքին քաշել կոլտնտեսականներին ու աշխատավոր մենատնտեսներին և վերստուգման նյութերը լուսաբանել մամուլի մեջ․ վերստուգման գործին քաշել գյուղխորհրդի ֆինանսական ու գյուղատնտեսական սեկցիաներին, կոմյերիտականներին, նրանց առանձին ինքնուրույն առաջադրություններ հանձնարարելով դպրոցների, հիվանդանոցների և այլ հիմնարկությունների ծախսերն ստուգելու, գյուղական գանձողներին յեվ մյուսներին ստուգելու վերաբերմամբ, վերստուգման արդյունքների մասին զեկուցումներ տալ գյուղխորհուրդների ընդլայնված նիստերին, ներգրավելով ամբողջ գյուղական խորհուրդը․ վերստուգումների հետևանքը լուսաբանել պատի մամուլի մեջ, քաղբաժնային և շրջանային թերթերում․ հաշվետվական զեկուցումներ տալ ընտրողների առաջ։

5․ Ժամանակին կատարել վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքի մասին շրջֆինբաժնի ու նրա հրահանգիչների տված ցուցմունքները։

6․ Վերստուգիչ հանձնաժողովները սիստեմատիկ կերպով պետք է ստուգեն, թե գյուղական խորհուրդը ժամանակին է կատարել շրջֆինբաժնի հրահանգների և վերստուգիչ հանձնաժողովի կատարած վերստուգման հետևանքով՝ գյուղխորհուրդներին արված առաջարկությունները։

7․ Վերստուգիչ հանձնաժողովը շրջգործկոմում զեկուցումներ պետք է տա վերստուգման հետևանքների մասին՝ յուրաքանչյուր կիսամյակում մի անգամից ոչ պակաս․ անհապաղ հայտնել ի գիտություն շրջգործկոմի և շրջֆինբաժնի վերստուգիչ հանձնաժողովի կողմից գյուղխորհրդում գտած անկարգությունների և չարարկությունների մասին, մատնացույց անելով իսկական մեղավորներին։

8․ Անհապաղ բարձրի կազմակերպություններին ու դատական օրգաններին հանձնել միջոցների և գույ

քի վատնման, հափշտակությունների ապօրինի ծախսումների վերաբերմամբ յերևան հանված գործերն ու աշխատել, որ վատնողները հեռացվեն գործից ու պատժվեն:

9. Ամրապնդել վերստուգիչ հանձնաժողովների կազմը:

10. Ամեն ամիս պարտադիր կերպով ստուգել դրամարկղներն ու յուրաքանչյուր յեռամսյակում վերստուգել գյուղական խորհրդի ամբողջ ֆինանսական գործունեյությունը:

11. Պարբերաբար հաշիվ ներկայացնել բնակչության գյուղական խորհրդի ֆինանսական գործունեյության, վերստուգման հանրագումարի և գյուղական բյուջեն կատարելու մասին:

39.656
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՀ Ազգային գրադարան
NL0220791